ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի մայիսի 17-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11-3»*** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի հոկտեմբերի 29-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ընթացքում ընթացիկ խնդիրներ առաջանալու հետ կապված Կապալառուի կողմից առաջարկվել է պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 30 օրացույցային օրով:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի 1.3 կետում և N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում «01.11.2018թ.» բառերը փոխարինվել են «30.11.2018թ.» բառերով:

Փոփոխության հիմնավորում N 1: ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11-3» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» 10 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՌՎԱ-ԵՐԿԻՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի մայիսի 17-ին կնքված ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Սբ Գևորգ եկեղեցու (կառույցների) ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքների պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11-3» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կապալառուն համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 1.3 կետում և N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում աշխատանքների կատարման ժամկետի ավարտը՝ **«01.11.2018 թ.»** բառերը փոխարինել **«30.11.2018 թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական շենք N 2, հեռ.՝ (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011013001 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«ԱՌՎԱ-ԵՐԿԻՐ» ՍՊԸ Հասցեն՝ ՀՀ, ք. Նոր Հաճըն, Թումանյան 7/2 հեռ.՝ 091 427771, էլ. փոստ՝ arvaerkir@bk.ru ՀՎՀՀ 03524428, հ/հ 11500 00285100100 «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Գլխավոր քարտուղար՝ _____ Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ	Տնօրեն՝ _____ Ս. Ավետիսյան (ստորագրություն) Կ.Տ